


7738

ԼԵՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔԻ

ՀԱՄԱՌԱՅԻՆՈՒՄԻ (Բ)
ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ
II ՊԼԵՆՈՒՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
(28—30 մայիս, 1934)



ԿՈՒՍՀՐՍՏ — ԲԱԳՈՒ 1934

24 SEP 2006

3KП2 (47.92)

Z-22

77

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

1 DEC 2009

ՀԱՄԱՈՄԱՎՈՒՄԻ (Բ)
ԱՆԴՐՅԵՐԿՈՄԻ
II ՊԼԵՆՈՒՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1009
1288
3881

Գրքի համար	Անուն
1	Դավիթ

1. Ցանքսի հանրագումարների, քաղաքականության, բերքահավաքի և մթերման կամպանիաների խնդիրների մասին.
2. ԱՍՖՆՀ - ում ապրանքաշրջանառության ծավալելու մասին.
3. ԱՍՖՆՀ - ում անասնապահության բարձրացման միջոցառումների մասին:

(«Զարյա Վոստոկ»
1934 թ. 4, 5 յեկ 8 հունիսի)



ՀԱՐԱՑ - ԽՍՀՈՒ - 1934 թ.

Հայերենը խմբագրեց՝ Հ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Կ. ԹԱՌԼԱՆՅԱՆ

ՅԱՆՔՍԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ, ՔԱՂ ՀԱՆԱ-ՄՇԱԿՄԱՆ, ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՅԵՎ ՄԹԵՐՄԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համկոմկուսի (ք) Անդրյերկոմի
II պլենումի փորձումը

Անդրկոմկուսի կուսկազմակերպություններն ավելի հա-
ջող և կազմակերպված, քան թե անցյալ տարի՝ կատարե-
ցին 1934 թ. դարձանագանը: Առ 25 մայիսի բոլոր դարձա-
նային կուստուրաների ցանքսի պլանը Անդրկոմկուսում կա-
տարվել է 95,5 տոկոսով, նույն թվում հացահատիկայինը
— 98,70%, բամբակինը՝ 101,4%, բանջարանոցա — բաղ-
չայինը՝ 76,9%, կերայինը՝ 84,40%-ով: Կատարված է
թեյի պլանտացիաները գցելու, վերականգնելու և նորոգ-
ման, խաղողի այգիներ գցելու և մրգեղենի ու ցիտրուսա-
յին տնկիների պլանները:

ՄՏԿ սպասարկիչը և քաղաքայինների կողմից ղեկավար
վող կուստեսուլթյունները, ինչպես մինչցանքսային, նույն
պես և ցանքսի աշխատանքների բոլոր ցուցանիշներով գը-
նում էլին առջևից:

Դրա հետ համատարապես Համկոմկուսի (ք) Անդրյեր-
կոմի պլենումը նշում է, վոր մի շարք շրջաններում, խորհ-
տրնտեսություններում և, մանավանդ, անհատական տնտե-
ստեսություններում և կուստեսուլթյուններում և, մա-
նավանդ, անհատական տնտեսություններում, ցանքսը կա-
տարվել է ցածր վորակով (յերեսահերի, մատ փոցիված,
անկանոն սերմած, չթունախեղդված սերմերով ցանքսը և այ-
լն), նույնպես և տեղի յե ունեցել մի քանի կուլտուրա-
ների ցանքսի ժամկետների ձգձգում (յեգիպտացորեն, յե-

գլխավորական բաժնակ), և չի կատարվել մրցատուներին նորոգման պլանը:

Պլենումն ընդգծում է, մի 1934 թվին բարձր բերքի համար պայքարի հաջողութունն ուղղակի կախված է քաղհանա — մշակման աշխատանքները և բերքահավաքի կամպանիան կանոնավոր ու ժամայակին կատարելուց: Ցանքի չրջանում թուլատրված ագրոտեխնիկական թերությունները պետք է ուղղել՝ ցանքսերը հետագայում ճիշտ խնամելով:

Բարձրահա — մշակման աշխատանքները և բերքահավաքման — մթերման կամպանիան հաջող կատարելու նպատակով պլենումն առաջարկում է.

1. Կոլտնտեսութուններում և խորհրդատեսութուններում աշխատանքի ճիշտ կազմակերպման, աշխատանքային դիսցիպլինայի հետագա ամրացնելու, աշխատունակների լիովին աշխատանքի դուրս գալն ապահովելու համար՝ քստուղել և ամրացնել յուրաքանչյուր կոլտնտեսական բրիգադի և ողակի աշխատանքը, ձթույլատրել բրիգադներին ամրացրած արտադրական տեղամասերի խախտումը, բրիգադների ներսում ողակներին ամրացնել տեղամասեր՝ քաղ հանա — մշակման աշխատանքների չրջանում: Վճարական պայքար տանել մի արք չրջաններում և կոլտնտեսութուններում նկատվող բրիգադիներին և տղակավարներին դիմադրելու միտքների դեմ: Կազմակերպել բոլոր կոլտնտեսութուններում և բրիգադներում յերեխաների խնամքը (մանկամտուրներ, խնամք դաշտային ոթեւաններում և այլն): Ապահովել դաշտային ոթեւանները խմելու ջրով և կարգավորել կոլեկտիվ անունը (տաք կերակուր, թեյ) իրենց, կոլտնտեսականներին մթերքներին:

2. Խորհրդատեսութուններում, մանավանդ բաժնակային, թեյի, մրգախաղողային, սերմաբուծական ժամանակին կազմակերպել սեզոնային բանվորական սովի ընդունելութունն ու ապաստարկումը (բնակարաններ, անոնդ, կուրտսպատարկում), ծավալելով խորհրդատեսութունների սեզոնային բանվորների մեջ մասսայական քաղաքական աշ-

խատանք, ձգտել ամուր աշխույսցիպլինա և աշխատանքի բարձր արտադրողականութուն սահմանելուն:

3. Ստուգել խորհրդատեսութունների, կոլտնտեսութունների, ՄՏ կայանների և մեկտնտեսների մշակման և բերքահավաքի ինվենտարի պատրաստ լինելը (մեքենայացված, ձիաքարչ և ձեռքի, առանձին ստուգել կոմբայներին բերքահավաքին պատրաստ լինելը), վերջացնել ինվենտարի նորոգումը սահմանված ժամկետներին և աշխատանքների ժամանակ կազմակերպել ինվենտարի դաշտային նորոգումը (չարժական արհեստանոցներ, դարբնոցներ):

4. Կոլտնտեսութուններում և խորհրդատեսութուններում առանձնացնել ուժասպառ և անաշխատունակ բանող անասուններին, լիովին ազատել նրանց ամեն տեսակի աշխատանքներից, կազմակերպել գիշեր — ցերեկ նրանց արածացնելը և պարարտացնելը՝ պատրաստելով մշակման և բերքահավաքի աշխատանքներին:

5. Կազմակերպել կատարվող գյուղատնտեսական մշակման և բերքահավաքի աշխատանքների վորակի հաստատարկան և պետական (չրջողբաժին) վերահսկողութուն: Ձթույլատրել, մի քան բրիգադները և կոլտնտեսութունների նախագահներն աշխատանքն ընդունեն կոլտնտեսականներին, մինչև հայտնաբերված թերութունները լիովին վերացնելը:

6. Նշելով գյուղատնտեսութան մնաստունների դեմ պայքարի թուլացումը, հոգմարմինների անպատրաստ լինելը (չորժողկոմատ, չրջողբաժին, ՄՏԿ)՝ մնաստունների դեմ պայքարելու և բժշկութան դուրսթին, կուսակցութան չրջկոմիտեներին և ՄՏԿ և խորհրդատեսութունների քաղբաժիններին այդ աշխատանքները վերցնել իրենց հատուկ հսկողութան տակ, պարտադրելով չրջողբաժիններին, ՄՏԿ, գյուղխորհուրդներին և կոլտնտեսութունների վարչութուններին՝ կազմակերպել մնաստունների դեմ պայքարելու պատրաստութան միջոցառումների կիրառումը (թուխեր և սպարառուրաներ բերքն ու բաշխելը, հրահանգումը, պայքարողների պատրաստումը և այլն): Հատուկ ուշադրութուն դարձնել գյուղատնտեսու-

թիւն միաստուծներէ դեմ պայքարել կաղմակերպմանը՝ մեքենական միջոցով, նույնպէս և ձեռքով հալածելուն:

7. Բամբակի, կապույտ առվույտի, ճակնդեղի և այլ կուլտուրաների ժամանակին ջրերն ապահովելու նպատակով՝ կաղմակերպել վոռոգման ցանցի և ջրմուղների ուշադիր հսկողութիւն, մտցնել դիշեր — ցերեկյա վոռոգում, բամբակի վոռոգման պահանջի համապատասխան, ջուրը ծախսել տնտեսաբար, չթուլյատրելով ցամաքում, նույնպէս և ցանքսերի ճահճացում: Հաջողացնել ջրողների աշխատանքի ճիշտ կաղմակերպումը, նրանց աշխատանքի վարձատրումը կախման մեջ դնել աշխատանքի վորակից:

8. Պլանումն առաջարկում է շրջանային կուսակցական, խորհրդային և հողային կաղմակերպութիւններին անցկացնել կարևորագույն գյուղատնտեսական կուլտուրաների և բերքահաւաքի մշակման և նախադասութեան հետեւյալ հիմնական միջոցառումները:

Բամբակի նկատմամբ: Պարտադիր վարժում կատարել յերկու նոսրացում, չորս քաղհան, չորս փխրացում և անհրաժեշտ բանակութեամբ վոռոգումներ, ապահովելով կատարելիք աշխատանքների բարձր մոտակը: Քաղհանը յեւ վերացումը կատարել հետեւյալ ժամկետներին. առաջին քաղհանը և առաջին փխրացումը մայիսի 10-ից մինչև հունիսի 5-ը, յերկրորդը՝ մայիսի 25-ից մինչև հունիսի 15-ը, յերրորդը՝ հունիսի 16-ից մինչև հուլիսի 5-ը, չորրորդը՝ հուլիսի 6-ից մինչև հուլիսի 25-ը: Հոմոլով մարակլած տարածութիւններում նոսրացումը հետաձգել 10 օրով:

Աղբրեջանում բամբակի մշակման ժամանակ առանձին ուշադրութիւն դարձնել բեթմենների արմատացման և ոգտագործման վրա: Բամբակի տրակտորային փխրացումը կատարել 30 հազար հեկտար տարածութեան վրա և բամբակի միաստուծների դեմ պայքարել ամբողջ մարտիլած տարածութեան վրա: Սահմանել բամբակի սերմնարուծական ցանքսերի զրոյթի և մշակման սխառնաստիկ հսկողութիւն: Ապահովել առաջիկա բամբակահաւաքի կոմպակտութիւնը յետոյ նախապատրաստական աշխատանքները ժամանակին կատարելը (տուրման — վաղուծումների, տրակտոր-

ների նորոգումը, չլանդիստներ, մեքենագետներ պատրաստելը և այլն) և քոչվորական շրջաններում բանուծի ամբարացումը:

Թեյի նկատմամբ: Անհապաղ վերացնել տերեւները ժողովելու և թորխելու պակասութիւնները, մնաւեանապէս և ամենուրեք արմատացնել անընդհատ ժողովելը: Ապահովել հալածելու, թորխելու և քաղհանելու պլանների լիովին կատարումը: Թորխելը կատարել հետեւյալ ժամկետներին. առաջինը՝ մայիսի մեկից մինչև հունիսի մեկը, յերկրորդը՝ հունիսի մեկից մինչև հուլիսի մեկը, յերրորդը՝ հուլիսի մեկից մինչև ոգոտտոսի մեկը, չորրորդը՝ ոգոտտոսի մեկից մինչև սեպտեմբերի մեկը, հինգերորդը՝ ոգոտտոսի 20-ից մինչև սեպտեմբերի 20-ը: Քաղհանումը. առաջինը՝ մայիսի մեկից մինչև հունիսի 10-ը, յերկրորդը՝ հուլիսի մեկից մինչև ոգոտտոսի մեկը, յերրորդը՝ ոգոտտոսի մեկից մինչև սեպտեմբերի 10-ը: Հուլիսի 5-ից մոշ ուշ վերջացնել թեյի ֆաբրիկաների կառուցվող թոշնեցի ուղ և հունիսի 10-ին տեսակաւորման ցեխերի սարքավորումը: Անհապաղ ստուգել թեյի տերեւ ընդունողների անձնակազմը և աշխատանքը՝ համարելով բոլոր ընդունման կետերը ստուգված վորակաւոր ընդունողներով: Հունիսի 10-ից մոշ ուշ վերջացնել ընդունման կետերը տանող ճանապարհների և կամուրջների նորոգումը, ստեղծելով անհրաժեշտ պայմաններ՝ թեյի տերեւի փոխադրման ամտոտրանսպորտի անընդհատ շարժման համար:

Ցիտրուսների վերաբերյալ: — Սահմանված ժամկետներում անցկացնել տունիկերի վրա ամառային ու աշնանային խնամքի բոլոր միջոցառումները՝ տնկարաններում չարքերի արանքները չորս անգամ թորխելն ու հարելը, յերկրորդ բուժումը՝ հունիսի 20-ից մինչև հուլիսի 10-ը, յերրորդ բուժումն ոգոտտոսի 15-ից մինչև սեպտեմբերի 15-ը և հանքային պարարտանութիւնների մտցնելը: Բուժարաններում — 8 անգամ թորխումը, քաղհանումը, կրկնակի բուժումը (մայիսի մեկից մինչև հուլիսի մեկը), դոմադրի հեղանջութի մտցնելը 2-3 անգամ: Հատուկ ուշադրութիւն դարձնել

բուժարաններին, նրանց վրա խնամք տանելուն, սածիլնե-
րի արտադրութեանը: Տրիֆուլատի կանաչ պիկիլրովկան
անցկացնել մայիսի 20-ից մինչև հուլիսի 1-ը, ցիտրուսնե-
րը պատվաստելու կամպանիայի համար ձմարանների ապրո-
բացիան, և պատվաստողների ներհյուսողների անհրա-
ժեշտ կազմերի պատրաստումը՝ հունիսի 15-ից մինչև հու-
լիսի 15-ը: Անցկացնել 1,190 հազար վայրի ծառերի ամա-
ռային պատվաստում, նրանցից մանրաբեր՝ 883 հազար
հատ, լիմոն՝ 217 հազար հատ, նարինջ՝ 70 հազար հատ,
գրեյֆրութ՝ 20 հազար հատ: Ստուգել տնկելու համար ներ-
մուծման նյութերի վորակը, ապահովելով նրանց համա-
պատասխան խնամքով:

Ծխախոտի վերաբերյալ: — Ավարտել սահմանափած ժամ
կետներին (հունիսի 10-15-ը) ծխախոտների սածիլումն ու
վերասածիլումը: Անցկացնել ծխախոտի բերքատվություն-
նը բարձրացնող բոլոր ագրոմիջոցատուները, — ջուրի
վերտալը, ծալերը կտրելը, քաղհանումը. առաջին քաղ-
հանը՝ սածիլելուց 8-10 որ հետո, յերկրորդ քաղհանը՝ ա-
ռաջին քաղհանից յերկու չաբաթ հետո և յերրորդ քաղհա-
նը մոլախոտերով պատած հողամասերում, նույնպես և
ջրերը ջրովի ծխախոտագործութեան շրջաններում:

Առանձին ուշագրություն դարձնել ծխախոտի բերքահա-
վաքի նախապատրաստական աշխատանքներին, ժամանա-
կին շրջաններն ապահովելով չարելու քողով: Նոր ծխախո-
տաչորացնողների շինարարությունը և գործութուն ունեցող
ծխախոտաչորանոցների ու Փերմենտացնող գործարանների
նորոգումն ավարտել հուլիսի մեկից մոտ ուշ:

Հացահատիկների վերաբերյալ: — Բոլոր շրջաններում
պարտադիր կերպով անցկացնել կեղտոտված ցանքերի ձեռ-
քով քաղհանումը, իսկ զարնանացան հասկավորներինը՝
մինչև նրանց ցողուն հանելը: Անցկացնել յեզիպիտացորենի
յերկու անգամից մոտ պտկաս թորխում և բուկը տալ: Հա-
ցահատիկների բերքահավաքն ավարտել — ցորենինը՝ 8-10
որպես ընթացքում, վարսակ — գարունը՝ 10-12 որպա ըն-
թացքում: Փափուկ ցորենի թափվող տեսակների բերքահա-
վաքն սկսել հատուկացման մեղրամոմային շրջանում: Ամեն

նուրեք պարտադիր կերպով անցկացնել՝ թափված հատիկ-
րի փոցխով և ձեռքով հավաքումը, դեզ դնելը և կաթեղու-
վալքերում դիզելը, կաղմակերպելով կալսող աղբեղատնե-
րի և հացահատիկների պահեստների ախտահանման սխա-
սիտեմատիկ հսկողություն:

Կաղմակերպել դաշտերի, կալման կետերի և հացահա-
տիկների պահեստների պաշտպանումը հափշտակումներից
և հրդեհներից, այդ բանին ներգրավելով կոմյերխական և
պիոներական կաղմակերպություններին (դետեր, պահակե-
տեր): Սոսհարքն այդ շրջաններում ամենուրեք ավարտել
մինչև հացահատիկների բերքահավաքն սկսելը:

Առաջին հերթին, հացահատիկների պետական մատա-
կարարումները կատարելուց հետո, ապահովել 1934 թվի
աշնանացանի և 1935 թվի զարնանացանի համար սերմացվի
և ապահովագրական ֆոնդերի ժամանակին լցնելը:

Սերմաբուծության վերաբերյալ: — Կատարույտ առվույ-
տի անցյալ տարվա ցանքի լավագույն հողամասերից ա-
ռանձնացնել 1900 հեկտար նրանց դաշտային ապրոքացեղա-
յից հետո, թողնել սերմ հանելու, ապահովելով արածաց-
նելուց, թույլ չտալով, վոր հարեն խոտի համար:

Ավարտել նաև բոլոր սերմաբուծական ցանքերի դաշ-
տային ապրոքացիան, տեսակների դանադան կատեգորիանե-
րի բերքահավաքն առանձին կատարել, թույլ չտալ, վոր
հավաքելիս ու պահելիս մյուս սերմացունների հետ խառ-
նելին: Հացահատիկների բերքահավաքի ժամանակ, սեր-
մեր ստանալու նպատակով, կաղմակերպել լավագույն հո-
ղամասերի ընտրություն:

9. Պլենումը նշում է, վոր՝ չնայած մեքենա-տրակտո-
րային կայանների կողմից հաջողութեամբ կատարվել են
արտադրական առաջադրությունները, բայց և այնպես ՄՏ
կ-ների մեծամասնութեան աշխատանքում մի չաբ խոշո-
րագույն թերություններ կան. — տրակտորների և դյուզա-
տրնետեական մեքենաների նկատմամբ անբավարար խը-
նամբ և տեխնիկական հսկողություն, նորոգման, առանձ-
նապես ընթացիկ ցածր վորակը, վատելիքի ամենուրեք զե-
րածախսումը, կոլտնտեսությունների աղքատաբանումն

սպասարկման թույլ դրվածքը, վորի հետեւանքով էլ ՄՏ կենքի մեծամասնության ֆինանսա-տնտեսական դրու-թյունը խիստ ծանր է:

Պլենումը համարում է, վոր 1934 թվին վուսակցական-խորհրդային և հոգային որդանների հիմնական խնդիրնե-րից մեկն էլ ՄՏԿ-ների ֆինանսա-տնտեսական ամրա-պրնդումն ու նրանց որինակելի, արդյունաւետ տնտեսու-թյուններ դարձնելու ամենորդա սխառեմատիկ աշխատանքը պիտի դառնա:

10. Պլենումը համարում է, վոր ՄՏԿ-ները մինչև հիւմ տրակտորիստների և տրակտորային բրիգադիւնների աշխա-տավարձի ճիշտ կգամակերպման չեն հասել, ՄՏԿների, տրակտորիստների և բրիգադիւնների վորակաւորումը դեռ էս պատշաճ մակարդակի չի բարձրացրլած:

Յենեւով դրանից՝ պլենումը պարտաւորեցնում է ՄՏ կենքի գերեկտորներին և քաղքաժինների պետերին, մի ամալա ժամկետում կանոնաւորել տրակտորիստների և բրիգադիւնների աշխատանքի հատուցման կադմակերպումը, քարեւալել նրանց կուլա-կենցաղային սպասարկումը, պատշաճ բարձրության վրա դնել կուսակցական-մարտա-քական աշխատանքը նրանց մեջ, և պահաւել տրակտորիստների ու բրիգադիւնների մասին՝ Աշխատանքի և Պաշա-պանության խորհրդի կողմից հաստատւած կանոնադրու-թյան կենսագործումը:

11. Պլենումն արձանագրում է, վոր 1933 թվին գյուղատնտեսական մթերքների մթերումը, պլանային առաջա-դրություններն հաջորությամբ կատարելով հանդերձ (բամբակ — 102,3 տոկոսով, հացահատիկների մատակարարում ները — 100 տոկոսով, ծխախոտը — 106,3 տոկոսով, պտուղ ները — 107,5 տոկոսով, ցիտրուսները — 100 տոկոսով), այնուամենայնիւ ուղղելով են անկադմակերպության մի չարք դեպքերով (տեխնիկական բազայի անպատրաստ լինե-լը, չպայմանագրւած արտադրանքի բնորոշում, պահեստա-յին չենքերով և տարայով պահաւում չլինելը, տրանսպոր-տային անկանոնություններ և այլն):

Առաջիկա մթերումները ավելի լաւ կադմակերպելու նը պատաւով պլենումն առաջարկում է.

Բամբակամբերումների վերաբերյալ. ա) անհաղաղ ծաւալել ծածկոցների շինարարությունը յեւ նորոգու-մը, դնելով նրանց միանգամայն պատրաստ վիճակի մեջ՝ վոչ ուչ, քան ողոստոսի 15-ը, միաժամանակ ա-պահովելով բամբակաւորիչ գործարանների նորոգման ա-վարտումն ու շահագործման գործարկումը՝ ամերիկական բամբակի մշակման համար մինչեւ 1934 թ. սեպտեմբերի մեկը, յեղիպիտական բամբակի համար՝ մինչև սեպտեմբե-րի 10-ը: Մինչև ողոստոսի 15-ը ավարտել սերմացուլի բամ-բակային բոլոր պահեստների արտահանումը: Ապահովել առաջիկա բամբակամթերման կադմակերպի համար՝ ունե-ցած բոլոր քսակների ամբողջությունն ու պետքական վի-ճակում պահելը: Ժամանակին ավարտել բամբակաւորիչ գործարանների տերբիտորիայում գտնուող ճանապարհների և կամուրջների, ինչպես և դեպի նրանց տանող ճանապարհ-ների նորոգումը, լիովին կարգի բերել նաև բամբակաւորիչ գործարանների և մթերման կետերի բակերը: Մինչեւ սեպ-տեմբերի մեկն ավարտել ընթացիկ և հիմնական նորոգում ները ԱՍԽՀ հետեւյալ խճուղիների վրա — Թարթառ — Մարգուչեան, Ղարվենդ-Խնձիրխտան, Ուջարի-Չարդոր, Փյանջա — Սամուխ: Ապահովել դաշտերում բամբակի ճիշտ տեսակաւորելը և բոտ տոսնդարանների գնման կետերին հըն դամբը բամբակի հանձնումը: Հանձնարարել Անդրկովկաս-յան ժողկոմխորհին՝ մշակել բամբակաքաղին քսակներ, քոց, տրանսպորտ և այլն մատակարարելու հարցը, նույն-պես և բամբակաւորիչ գործարաններին տեխնիկական մա-տակարարման հարցը: Պարտաւորացնել բամբակաւորիչ գործարաններին մինչև հունիսի 15-ը վերջացնել 1933 թվի բերքի բամբակի մշակումը, իսկ հունիսի մեկից սկսել բամ-բակաւորիչ գործարանների նորոգումը: Ադրբեջանի ժող-կոմխորհը պետք է իր հատուկ ուշադրության տակ վերցնի բամբակաւորիչ գործարանների աշխատանքն ու նորոգումը: Հացամբերումների վերաբերյալ. — Հանրապետու-թյունների կենտրոններն ու ժողկոմխորհներն հունիսի ա-

ուջին կեսին ամենուրեք ստուգում պիտի կատարել Զադոս
դերնոյի, սպառողական սիստեմի և Զադոսխոյուկի գնման
կետերի, թե վորքան են նրանք պատրաստ նոր հացահա-
տիկայինների ընդունելու համար և կետերի ապահովմա-
ծությունը կշեռքներով, շրջանառական տարայով և բրե-
զենտներով:

Խնամքով ստուգել գնման կետերի աշխատողներին կադ
մը, մաքրելով հաց ընդունելու ապարատը խորթ տարրե-
րից, վերացնելով հացի հափշտակման և հաց հանձնողնե-
րին՝ հանձնվող հացը պակաս կշռելու բոլոր հնարավորու-
թյունները:

Ապահովելով հաց հանձնողներին կուլտուր - կեն-
ցադարին ապաստարկումը մթերման կետերում, կազմակեր-
պելով կարմիր անկյուններ, ճաշարաններ, Վեյարաններ,
անասունների համար պատրաստել ջուր տալու տեղեր:

Համկոմկուսի (բ) Անդրյերկովի պլենումը գտնում է,
վոր գյուղատնտեսական մթերումների մնացած բոլոր տե-
սակներին նկատմամբ (ծխախոտ, պողա-բանջարեղեն և
այլն), պետք է հատուկ ուշադրություն դարձվի տեխնի-
կական բազաների, տարայի ու տրանսպորտի պատրաստ-
ման յեվ մթերողական սիստեմի համար կադրերի ջոկելու
հարցերին, վորոնք կարողանան ապահովել մթերումներին
պլանները ժամանակին վորակյալ կերպով կատարելն ու
մթերած ապրանքները լիովին պահպանելը: Մթերող որ-
գանների բոլոր աշխատողները պետք է անցնեն վիկայող
հանձնաժողովով և հաստատվեն համապատասխան կուսակ
ցական, խորհրդային որգաններին կողմից:

12. Համկոմկուսի (բ) Անդրյերկովի պլենումը մատ-
նանշում է, վոր՝ չնայած Համկոմկուսի (բ) 17-րդ համա-
գումարից և ԽՍՀՄ Կենտրոնականի ու Ժողկոմխորհի՝ հո-
դային որգանների մասին հանած վորոշումից հետո զգալի
ժամանակ է անցել, բայց մինչև հիմա դեռ չի ավարտվել
դրանց վերակառուցումը, նախատեսվող շրջնորդաժիննե-
րում ու ՄՏԿ-ում: Պլենումն առաջարկում է հանրապետու-
թյունների կենտրոններին ու Ժողկոմխորհներին, շրջկոմնե-
րին ու ՄՏԿ քաղբաժիններին ամենակարճ ժամանակում ա-

վարտել նրանց վերակառուցումը՝ կատարելության վորո-
շումների հիման վրա, ամրապնդել նրանց կադրերը և բա-
րելավել հողային որգանների աշխատանքների սիստեմն ու
մեթոդները, վերացնելով դեկավարման գրասենյակային -
բյուրոկրատական մեթոդները: Հատուկ ուշադրություն
դարձնել ագրոտեխնիկայի աշխատանքի պայմանները բա-
րելավելու վրա (բնակարան, փոխադրական միջոցներ, աշ-
խատավարձի ժամանակին տալը, մասնագետներին ճիշտ ոգ-
տագործումը, նրանց վերապատրաստումը և այլն): Գյու-
ղական տնտեսության աղելի մասնագետները պիտի շըր-
ջապատված լինեն խորհրդային և կուսակցական կազմակեր-
պությունների հոգատարությամբ ու ուշադրությամբ:

Պլենումը գտնում է, վոր գյուղատնտեսության 1934
թվի արտադրական պլանը կատարելը, բերքատվության
բարձրացումն ալժամ լիովին կախված է քաղհանա - մշակ
ման, բերքահավաքի և մթերման աշխատանքների հաջող
անցկացումից: Անդրկովկասի կուսակազմակերպությունները
պետք է ալդ լնդիլրների շուրջը կազմակերպչական, մաս-
սայական - քաղաքական աշխատանք և սոցմբցում ծախա-
լեն շրջաններում և կոլտնտեսություններում, կոլտնտեսա-
կանների, մենատնտեսների և սովխոզների բանվորների
մեջ, մշակման և բերքահավաքի աշխատանքների լավա-
գույն կատարման համար:

Պլենումը կոչ է անում Անդրկովկասի բոլշևիկներին՝
որինակելի կերպով կազմակերպել մշակման, բերքահավա-
քի և մթերման աշխատանքները և ալդ հիման վրա նոր հա-
ջողությունների հասնել ԱՍՖՍՀ գյուղատնտեսության վե-
րելի և Անդրկովկասի կոլտնտեսությունները բոլշևիկյան,
խակ կոլտնտեսականներին ունեւոր դարձնելու գործում:

ԱՍՖԻԶ-ՈՒՄ ԱՊՐԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒ- ԹՅՈՒՆԸ ԾԱՎԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համկոմկուսի (ք) Սնդրյերկովի
II պլենումի վորոշումը

Ամբողջ ժողովրդական տնտեսութեան մեջ ունեցած հաջողութիւնների շարքում Անդրկովկասը՝ սրբալի նախագումներ ունի և սպարանքաշրջանառութեան մեջ: Սպարանքաշրջանառութիւնը պետական և կոոպերատիվ տնտեսութեան (ներառյալ հասարակական սնունդը) 1930 թ. 770,4 միլիոն ռուբլուց աճել և 1933 թվին 2322,0 միլիոն ռուբլու յետ հասել: ավելացել է խանութների և առևտրական վրանների ցանցը— 1930 թվին 7,490 միավորից 1933 թվին հասնելով 14,748 միավորի:

Ստեղծված են կոոպերացիայի, պետատնտրի և արդյունաբերութեան նոր միջըջանային բաղաձեր: Անդրկովկասի կարեւորագույն ձեռնարկութիւններում կադմակերպված է բանմատակարարման բաժինների ցանց: Զգալի չափով աճել է հացի վաճառքի խանութների ցանցը, վորն այժմ ընդգրկւում է ԱՅՑԱՀ, 43 քաղաքներ: Ավելացել է հասարակական սնունդի ճաշարանների ցանցը, վորն սպասարկում է այժմ 716,1 հազար սպասողների: Ընդարձակւել է կոյտնտեսային առևտուրը: Աճել են կապիտալ ներդրումներն առևտուրի մեջ: Վոչնչութեան և հաւատարեցվել մասնավորը՝ սպարանքաշրջանառութեան մեջ:

Ստեղծված «սխալ կլինի կարծել, վոր խորհրդային առևտրի այդ ծավալումը բաւական է մեր եկոնոմիկայի պահանջներն բաւարարելու համար: Ընդհակառակն, այժմ ավելի քան յերեկվէ պարզ է դառնում, վոր սպարանքաշրջանառութեան ներկա դրութիւնը չի կարող բաւարարել մեր պահանջները: Դրա համար էլ՝ խնդիրը նրանում է կայս

նում, վորպեսզի ավելի ծավալենք խորհրդային առևտուրը, այդ գործի մեջ քաջին տեղական արդյունաբերութիւնը, ուժեղացնենք կոյտնտեսային-արդարացիական առևտուրը և նոր վճռական հաջողութիւնների հասնենք խորհրդային առևտրի բարձրացման բնագավառում» (Մտային, 17-րդ համագումար):

խորհրդային առևտուրն Անդրկովկասում անբաւարար ծավալված լինելու հիմնական պատճառներն են հանդիսանում՝ սպարանքների շարժման դանդաղկոտութիւնը թե կենտրոնական արդյունաբերական շրջաններից Անդրկովկաս, նույնպէս և առանձնապէս Անդրկովկասի ներսում՝ արտագրութիւնից դեպի սպասողը, առևտրական ցանցի վոչ ճիշտ դասավորութիւնը, անդրկովկասյան արդյունաբերութեան անբաւարար աշխատանքը, վորի Միութեան մյուս շրջանների համեմատութեամբ լայնապառի՝ վորակով ավելի վատ առարկաներ է արտադրում, ավելի բարձր ինքնարժեքով (Վրաստանի կարի տրեստը, Հայաստանի կարի Փաբրիկան, Ադրբեջանի կարի տրեստը, նույնպէս և Թիֆլիսի մահուդի գործարանը, Էնիմականի և Գյանջալի Փաբրիկաները), լայնապառի լրացուցիչ սպարանքների արտադրման բոլոր հնարավորութիւնների անբաւարար ոգտադործումը, առևտրական կադրերի և դրանց աշխատավարձի փոքրի վոչ ճիշտ դասավորումը, վորի հետեանքով սպարանքաշրջանառութեան վճռական տեղամասերը՝ գյուղկոտայները, խանութները, շրջմիութիւնը բաւականաչափ անբաւարար չեն վորակալ աշխատողներով, դեռևս վերացված չեն առևտրի ղեկավարման գրասենյակային-բյուրոկրատական մեթոդները:

Սպասկոպերացիայի սխառմի դեկավարութեան անձեռնութեան և անտգնականութեան ցուցանիշ է հանդիսանում քաղաքամերձ տնտեսութիւնների խախտառակ աշխատանքը, վորոնց միասնեքը 1933 թվին մեծ չափերի յետ հասել և արանձին կոոպ — կադմակերպութիւնների և առևտրական կետերի, ֆինանսների անուշադրութեան մասնները: Առևտրական ցանցում տեղի յետ ունենում գոյութիւններ և վատնումներ: Առևտրի մեջ աշխատող կրմու-

նիտաների հեղափոխական անբավարար աչալըթության հետեւանքով, հաճախ ներս են տողտկում առեւտրական կազմակերպութիւնների, խանութների, գյուղկոոպների մեջ ուղղակի թշնամիները, սպիտակ գլարդեականները, կուլակները՝ հնարավորութիւն ստանալով վնասելու ժողտրն տնտեսիւն կարեւորագույն տեղամասում՝ ապրանքաշրջանառութիւնում:

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումը մատնանրչում է, վոր չնայած այն մի շարք հաջողութիւններին, վոր ձեռք են բերել ապրանքաշրջանառութիւն ծախսման գործում 17-րդ համագումարից հետո (խանութների նոր ցանցի ծախսում, գարնանային շուկաներ, ապրանքաշրջանառութիւն պլանների բարձրացրած կատարում և այլն), կուսակցական և խորհրդային կազմակերպութիւնները ուղադրութիւն դեպի առեւտրի դարգացումն այնքան էլ բավարար չեն:

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումը վորոշում է.

1. Հաստատել Անդրկովկասի հատափաճառային ապրանքաշրջանառութիւն պլանը 1934 թ. հունիս-դեկտեմբեր ամիսների համար (7 ամիս) 1,784 միլիոն ռուբլու չափով, (շրջանառութիւն աճ, 1934 թվի առաջի 5 ամսի փաստացի կատարումն հաշվի առնելով, 25%-ով 1933 թվի դիմաց), նույն թվում՝ Վրաստանում 794,5 միլ. ռ., Ադրբեջանում 747,5 միլ. ռ., Հայաստանում 242,0 միլ. ռ.: Հաստատել առեւտրի մեջ կապիտալ ներդրումների պլան 1934 թ. համար (առանց բանատրամիսների) 17,0 միլիոն ռ., նույն թվում՝ Վրաստանին՝ 8,0 միլ. ռ., Ադրբեջանին՝ 7,2 միլ. ռուբլի, Հայաստանին՝ 1,8 միլ. ռուբլի: Հաստատել հառի ցանցը 1934 թվի վերջին Անդրկովկասում հասցնել 15,273 միավորի, յերանցից՝ քաղաքում՝ 7,330 միավոր, գյուղում՝ 8,043 միավոր, նույն թվում Վրաստանում — 6,700 միավոր, Ադրբեջանում—6,290 միավոր, Հայաստանում—2,383 միավոր: 1934 թ. ԱՍՖՈՀ քաղաքներում բաց անել լրացուցիչ կերպով 50 մասնագիտացրած խանութներ (պողարբանջարեղենային, մսապահածոկանա, թոնա-կաթ-

նային, արդյուն. ապրանքներ, վոտնամանի, կարի, տրիկոտաժի և այլն) Անդրժողկոմխորհի կից Աշխ. և Պաշտպ. խորհրդի կոմֆոնդերի լիազորի հատաժամ դիսկոնդացիայի համաձայն:

2. Ամենակարճ ժամկետում ապարտել առեւտրական — վարչական ապարատի կրճատումը բոլոր առեւտրա — կոոպերատիվային կազմակերպութիւններում առնվազը 10-15 տոկոսով 1934 թվի հունվարի դրութիւն դիմաց և ապրանքադեաների, առեւտրական և հաշվային աշխատողների վոչ պակաս 20 տոկ. վարչութիւններից տեղափոխելով առեւտրական ստորին ողակը, դրանում առանձին ուղադրութիւն դարձնել խանութների և գյուղկոոպների ամբալընդմանը, վորպես առեւտրի հիմնական ողակների վրա, վորոնց աշխատանքը վճռում է բանվորների, կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների լավագույն սպասարկումը:

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի, հանրապետութիւնների կենտրոնների բյուրոները պետք է յերեք ամսիա ընթացքում անձնապես ընտրեն և քաղաքների ու շրջանային կենտրոններից ստորին առեւտրական աշխատանքի ուղարկեն (գյուղկոոպները, խանութներն ու պահեստները) 200 կոմունիստներ, 300 կոմյերիտականներ՝ ինչպես խորհրդային կազմակերպութիւններից նույնպես և դալրոցական հիմնարկութիւններն ավարտողներից (խորհկուսադրոցներ, տեխնիկոմներ և այլն):

Նույնպես վոչ պակաս 200 տնտեսական աշխատողներ փոխադրել ժողտնտեսութիւն այլ ճյուղերից իբրեւ գյուղկոոպների նախագահներ, խանութների վարիչներ, շրջմիութիւնների նախագահներ, միջշրջանային բաղաների վարիչներ և այլն: Վերապատրաստել կոլտնտեսականներից գյուղկոոպների համար՝ վոչ պակաս 1300 հոգուց:

Ամենաուշագիւր ստուգման կարգ սահմանել առեւտրի և կոոպերացիայի սիստեմում նոր աշխատանքի ընդունվողներին, այդ նպատակով սպառկոոպերացիայի և պետառեւտրի հանրապետական ու շրջանային կենտրոններում կազմա-

1188
3947
1909



կերպոված հատուկ ատեստացիոն և ստուգիչ հանձնաժողով ների միջոցով, վոր ամեն մի ընդունվող մի ամսվա փորձ նախան ստաժին: Կոոպերատիվային կադրերի հոսու նույն ժողովը դադարեցնելու համար՝ արգելել կուսխորհոր պաններին հանելու կոոպերատիվային աշխատողներին իրենց աշխատանքից և նրանց այլ աշխատանքի տեղավորելու, առանց վերադաս կոոպատորգանների համաձայնության:

3. Պարտավորեցնել սպառախտեմի, պետտուտրի և այլ առևտրական կադմակերպություններին ղեկավարներին՝ ապահովել ապրանքների ինքնուրույն գնումների, գործարքների ու պայմանագրերի կնքման, խսնութիւնների աշխատողների ընդունման ու հեռացման և այն ապրանքների անմիջական ընտրության, փորոնք խանութները ստանում են մեծածախս ոգակներից, բոլոր գյուղկոոպների և խոշոր խանութների կողմից, իրավունքի էկեսպորտումը, պատասխանատվության յենթարկելով բոլոր նրանց, ովքեր կրկնադրեն այդ միջոցառումներին, սահմանափակելով գյուղկոոպների և խանութների նախաձեռնությունն ու ինքնագործունեությունը:

4. Պարտավորեցնել Անդրժողովխորհին և Անգրպրոֆխորհրդին՝ առևտրական կադմակերպությունների հետ միասին մի ամսվա ընթացքում վերակառուցել աշխատավարձն առևտրի մեջ աշխատե, փորպեսդի նա լսթանի աշխատողների անցումը գրասենյակից ոպերատիվ — առևտրական աշխատանքի, գեպի խանութն ու պահեստը և աշխատավարձը կառուցել աշխատե, փոր այդ լիովին կախված լինի աշխատանքի արդյունքներից ու ապրանքաշրջանառության պլանը կատարելուց իսկ խանութի նորսր-առևտրի մեջ առանձին վաճառողների մասնակցության համապատասխան, առանձին ապրանքային խմբերի շրջանառությունը հաշվի առնելով: Միջոցառումներ մշակել առևտրի աշխատողների կենցաղային պայմանները բարելավելու համար (հասանելի, հանգստի տների, գյուղկոոպների նախագահների, խանութների վարիչների, աշխատողների մատակարարման կադմակերպումը և այլն): Առևտրի արդիվ աշխատողներին

քին շրջապատել կուսակցական և խորհրդային կադմակերպությունների հոգատարությամբ և ուշագրությամբ:

5. Մեծաքանակ առևտրի ոպերացիաներ կադմակերպել Անդրկովկասի սահմաններից դուրս փոչ պլանային գնումներ կատարելու նպատակով, փորի համար Անդրմիությունը (Չախսայուղ) մի ամսվա ընթացքում պետք է գնան գրասենյակներ առեղծի Մոսկվայում և առևտրական գործակալություն Միության խոշորագույն արտադրող կենտրոններում: Անդրմիության առևտրական — ոպերատիվ ապարատը փոխադրել տնտեսաշաղխաքի տխտեմի սեպտեմբերի մեկից, համապատասխան կերպով կրճատելով հանրապետական կադմակերպություններից նրան պահելու համար արած հատկացումները:

6. Լախացնել շրջմիությունների, սպառկոոպերացիայի միջշրջանային լաղաների և առևտրի շրջափանմունքների տնտեսական գործունեությունը՝ գրանց դերը ինքնամթերոմները և ապակենտրոնացած մթերոմների բնագավառում ուժեղացնելու հաշվին: Պարտավորեցնել Անդրմիությանն, սպառկոոպերացիայի և պետտուտրի հանրապետական կենտրոններին՝ գնումների աշխատանքում առաջելագույն կերպով յուրացնել ԱՍՖՆՀ հանրապետություններում արտադրվող լախսպառի ապրանքների բոլոր ֆոնդերը, և ապահովել ապրանքների միջշրջանային փոխադրումների կադմակերպումը Անդրկովկասում և հանրապետությունների ներսում: Շրջմիությունների գործունեության կարևորագույն խնդիրները պիտի լինեն. մեծաքանակ առևտուր գյուղկոոպների համար, հատալաճաքը շրջկուլտխանութների, գնումների և մթերոմների միջոցով, արտադրական գործունեյության ծավալում, ստորին առևտրական ողակի — գյուղկոոպների ղեկավարում, նրանց գործունեության հաշվառն ու վերահսկողությունը: Պարտավորեցնել ապառողական սխտեմին՝ ամար տելու մինչեվ հունիսի 15-ր շրջանութների և կուլտխանութների կադմակերպման աշխատանքը:

7. Անհրաժեշտ համարել՝ պետրանկի կողմից անմիջապես վարկավորելու վո չախկաս 30 հաղար ուրբի շրջա-

նառություն ունեցող չահալեալ գյուղկոտայններն: 50 հազար ուսուցիչ ավելի չըջանառություն ունեցող չահալեալ գյուղկոտայններն անմիջական վարկավորման անցկացնել հունիս ամսում:

8. Հաշվի առնելով, լուր արդյունաբերական բաղանդի աշխատանքը սկսուեալ անհապաղելու և, հանձնարարել Անդրբոլկովնիսին կից Ալիս. և Պաշտպ. Սորհրդին կից Փոնդերի կոմիտեի լիազորութեանը՝ վերանայել ապրանքաշարժման սխառութեմը, վերացնել ապրանքաշարժման բաղմոքականութեանը և սահմանել վոր ապրանքները մինչև ստորին կետը հասնեն վոչ ավել քան 2-3 ողակի միջոցով, վերացնել ապրանք ուղարկելու անհամապատասխանութեանը, վոր խաղրութեանին հանդիպականութեանը՝ ի հաշիվ ապրանքի տրանզիտի ուժեղացման, ընդմին պարտավորեցնելով դա տախազութեան որդաններին պատասխանատվութեան յենթարկել աշն տնտեսավարներին, վորոնք հանցավոր են սաղրանքը տրանսպորտում, բաղարներում և առևտրական պահանջներում ուղացնելու գործում, նույնպես և արդյունաբերութեան աղատողական բաղանդի աշն դեկավարներին, վորոնք չեն ապահովում ապրանքներ բերելը ժամանակին կատարումը:

9. Հանրապետութեաններին կենտրոններն ու ժողովոխորհները մի ամսվա ընթացքում պիտի վերանայեն հատա վաճառի առևտրական ցանցի դիսկոնկացիա, ապահովելով նրա ճիշտ գետեղումը, ուժեղացնելով ցանցի բաղումը քան վորական չըջաններում, քանչեններում, գյուղական հեռա վոր վալրերում, ինչպես յեղած հնարավորութեանները ողատործելով, նույնպես և նոր խանութներ, կրպակներ, պալատականեր և աշն կառուցելու հաշիվն: Բոլոր խանութները, առևտրապահանջատաշին չենքերը, վորոնք զբաղված են վորպես բնակարաններ, գրասենյակներ և ալը, Գերեք ա մըսվա ընթացքում աղատել և առևտրական գործին տրամաղել: Սոսկեղ իՍՈՂՄ Ժողկոմխորհի բոլոր նոր տնտրումներին հարկերը առևտրական գործին հատկացնելու և առևտրական չենքերի վարձակալական վճարներն իջեցնելու մասին յեղած վորոշումների կատարումը:

10. Համկոմկոտի (բ) Անդրբերկոմի և հանրապետութեաններին կենտրոններին բյուրոները պիտի իրենց հսկողութեան տակ առնեն լալնսպառի ապրանքների արտադրման աշխատանքը և ապահովեն. ա) արտադրանքի վորակի բարեյալումը, բ) արդյունաբերութեան թողարկման գների իջեցումը, գ) բոլոր արտադրական առաջադրանքների լիակատար վիրատումը՝ չուկա բաց թողնել ապրանքներ ասորտիմենտով, վորին կարիք ե զգում չուկան, դ) լալնսպառի ապրանքների արտադրութեան ընդլայնումը, տեղական արդյունաբերութեան ծավալումը, տեղական հումութի նոր տեսակների հայտնաբերումն ու դրանց գործադրումը: Մի ամսվա ժամկետում վերանայել և հաստատել տեղական և տնայնագործական արդյունաբերութեան լալնսպառի ապրանքների արտադրութեան ծավալման ալաններն աշն հաշիվ, վորպեսզի 1934 թվին արդեն լրացուցիչ կերպով լալնսպառի ապրանքներ տրվեն վոչ ալակա 25 միլիոն ուսուցիչ, ալը. թվում. տնայնագործական գրաղմոնքալին կոոպերացիալի գծով 21 միլիոն ուսուցիչ և տեղական արդյունաբերութեան գծով — 4 միլիոն ուսուցիչ: Լալնսպառի առարկաների լրացուցիչ արտադրութեան կազմակերպել ծանր արդյունաբերութեան խոշոր ձեռնարկութեաններում (Ծմիդտի անվան, «26» անվ., Կալինինի անվ. Բաթումի բարակ ցինկի գործարան և ալը) — Մոսկվայի և Լենինգրադի որինակով:

11. Պլենումը պարտավորեցնում ե բոլոր կուսակցական և խորհրդային կազմակերպութեաններին իրենց ուղարկութեան կենտրոնացնել լիովին վերացնելու Անդրբերկովկասի արդյունաբերութեան և տնայնագործական — կոոպերացիալի կողմից վատարակ ապրանքներ բաց թողնելու խալառակի վատերը: Անհրաժեշտ ե խատորեն պատժել խատանքի մեղախորներին և չուկային անհարկավոր ապրանքներ բաց թողնողներին, դրա հետ միատին աշխատանք ծավալել Անդրկովկասի հարստաղուն հումութալին հընարավորութեաններն ողտադործել չուկային լալնսպառի լրացուցիչ արտադրանք տալու համար (կարանքի արտադրութեան, հյուսվածքի, ամանեղե

նի, կառվե ամանների արտադրութիւն, կաշաքա-
րատ-բրուտադործական, մարմարյոնի, շիմաստի գործ-
վածքներ և այլն): Պլենումը մատնանշում է, վոր շրջործ
փոմների մեծամասնութիւնը 17-րդ կուսամարումարից
հետո համարյա վոչինչ չի արել տեղական արդյունաբերու-
թիւնը ծախսելու համար: Համկոմկուսի (բ) Անդրյերկո-
մը մատնանշում է, հանրապետական առանձին ձեռնարկու-
թիւնների տեղական որդաններին դանդաղ հանձնելը: Պլն-
ումը պարտավորեցնում է հանրապետութիւնների ժող-
կոմխորհներին ամենակարճ ժամանակում ախարտել այդ
աշխատանքը: Անդրթողկոմխորհին — մի ամսվա ժամկե-
տում: քննել տեղական արդյունաբերութիւն մեջ լրացու-
ցիչ կապիտալային ներդրումների հարցը Անդրկովկասում
լայնապատ ապրանքների արտադրութիւնը զարգացումը ա-
պահովելու համար:

12. Հովանութիւն տալ Համկոմկուսի (բ) Անդրյերկո-
մի բյուրոյի վոխումանը՝ քաղաքամերձ տնտեսութիւնների
աշխատանքի մասին, պարտավորեցնելով հանրապետու-
թիւնների կենտկոմներին, քաղկոմներին և շրջկոմներին ա-
պահովել այդ վորոշումների վատարումը Համկոմկուսի (բ)
Անդրյերկոմի բյուրոյի սահմանած ժամկետներում, մասնա-
վորապես. ա) դործնական միջոցառումներ նշել քաղաքա-
մերձ տնտեսութիւնների առողջացման համար և արտադրա-
կան — ֆինանսական պլաններ կազմել ամեն մի վոնյտնե-
սութիւն համար առանձին, բ) վերանայել քաղաքամերձ
տնտեսութիւնների կազմակերպման պլանները, լիկվիդա-
ցիայի յենթարկելով առանձին ձեռնարկութիւններին կից ի-
րենց չարդարեցնող քաղաքամերձ տնտեսութիւնները, վո-
րոնք կազմակերպվել են առանց բախականաչափ ֆինանսա-
կան բաղայի:

Համկոմկուսի (բ) Անդրյերկոմի պլենումը պարտավո-
րեցնում է սպասարկումի և այլ առևտրական կազմակեր-
պութիւնների ղեկավարներին, շրջկոմներին ու քաղկոմնե-
րին անպայման հասնել քաղաքամերձ տնտեսութիւնների ան-
վատարերութիւնը 1934 թվին և կատարել ապրանքային
արտադրանքի նախատեսմամբ պլանը:

13. Լայն կազմակերպել անհատական բանջարաբու-
ծութիւնը զարգացումը՝ քաղաքներով բանվորների նախա-
ձեռնութիւնն ու ինքնադործունեութիւնն այդ դործում:
Հողամասեր հատկացնել նրանց, ովքեր ցանկանում են սե-
փական աշխատանքով բանջարանոցներ դրել ձեռնարկու-
թիւններից, քնակարաններից վոչ հեռու գտնվող հողերի
վրա, մի բանվորական ընտանիքին տալով $\frac{1}{8}$ — $\frac{1}{4}$ հեկտար
հողամաս: Պարտավորեցնել հանրապետութիւնների կենտ-
կոմներին՝ քննութիւն առնել անհատական անասնապահու-
թիւն և թռչնաբուծութիւն հարցը՝ պարտավորեցնելով
բննատրատիներին և սպասարկումին արդյունաբերու-
թիւն հիմնական ճյուղերի բանվորներին մատակարարելու
խոճկորներ, վոչխարներ և այծեր: Տնայնադործական — ար-
դյունար. կոոպերացիայում և տեղական արդյունաբերու-
թիւն մեջ կազմակերպել այդբանջարադործական թեթեւ
ինվենտար արտադրելու դործը:

14. Լայնադրել կերպով կազմակերպել արդյունաբերա-
կան ապրանքների հանդիպակաժ առևտուրը կոլտնտեսային
շուկաներում: Անդրթողկոմխորհին կից Աշխ. և Պաշտ.
Սորհրդի ֆոնդերի կոմիտէի լիազորութիւնը պետք է մի
ամսվա ընթացքում հաստատի կոլտնտեսային շուկանե-
րում միջերային և արդյունաբերական ապրանքների խա-
նութիւնը ցանցի դիակլոկացիան: Արկոմկուսի (բ) կենտ-
կոմը և Հայաստանի կուսկոմի (բ) կենտկոմը պետք է ա-
պահովեն մինչև տարվա վերջը Բագու և Յերիկան քաղաք-
ներում մի — մի ծածկած շուկա կազմակերպելը և բաց
անելը, Վրաստանի կուսկոմի (բ) կենտկոմը պետք է ըս-
կրի Թիֆլիսում յերկրորդ ծածկած շուկա կառուցելը:

15. Անդրթողկոմխորհը առևտրական կազմակերպու-
թիւնների հետ միասին պետք է արդեն 1934 թվի յերկ-
րորդ կիսին ապահովի ապակենտրոնացրված միջրումների
և ինքնամիջրումների տեսակարար կշիռի զգալի աւելացու-
մը ապրանքաշրջանառութիւն մեջ՝ առանձին ուշադրու-
թիւն դարձնելով կոլտնտեսութիւնների հետ յերկրորդա-
նի պայմանագրեր կնքելու, կոլտնտեսութիւններին արտա-
դրական ողնութիւն կազմակերպելու վրա (ադրոսպա-

սարկում, ձվա - թռչնաբուծական ֆերմաների կազմակերպում, գյուղատնտեսական ինվենտարը վերանորոգելու, աղնավացեղ անասունների ձեռք բերելու գործում ոգնություն և աշխ) և ինքնադնումների կազմակերպում սպառող պահանջների համեմատ և աշխ:

16. Պարտավորեցնել առևտուր անող կազմակերպություններին ապահովել հասանելի գոյություն ունեցող ցանցի, մանավանդ մեքենայացրած ցանցի (ֆարերիկ - խոհանոց) լիակատար բեռնափորումը և կոնկրետ միջոցներ ձեռք առնել ճաշի վորակը բարելավելու, նրանց արժեքն իջեցնելու ու աստորտիմենտն ընդլայնելու համար: Սանիտարական դրության մեջ դնել ճաշարանների գոյություն ունեցող ցանցը: Հասնել ճաշի վորակի բարելավելուն, սեփական ապրանքային բազան, ընդլայնելու, խոհարարների ու սպասարկող անձնակազմի լավագույն կադրեր բնորոշելու հաշվին, բոլոր ճաշարաններն ապահովել գոյությունով, դանակներով, պատառաքաղներով և այլ ինվենտարով, իսկ սպասարկող անձնակազմը, — խալթներով և աշխ սպեց - հագուստով: Համկոմկուսի (բ) Անդրյերկուսի պլենումը պարտավորեցնում է ապառախտեմի ղեկավարներին, այլև հասարակական սննդի գործի ղեկավարներին՝ ապահովել հասարակական սննդի բոլոր կազմակերպությունների աշխատանքների լիակատար անվնասաբերությունը՝ աշխատանքի վորակական ցուցանիշների բարելավման և հասանելի արտադրանքի ինքնարժեքի իջեցման միջոցով, թույլ չտալով բարձրացնելու բաց թողնման գըները՝ պլանային ինքնարժեքի տահմանված գների դիմաց, գումարած նորմալ կուտակումը:

17. Արդելել վորեև փակ բաշխիչի բացումն՝ առանց նախապես ուսումնասիրելու նրանց հնարավորությունները և ֆինանսական բազան: Հանրապետությունների կենտկոմները և ժողկոմխորհները պետք և լիվիդացի աշխ յեթարկեն անչահարեք, իրենց չարդարացնող փակ բաշխիչները, փակ բանկոտայները և մանր քաղսպառնկեթությունները:

18. Պլենումը առևտրի և կոոպերացիայի բոլոր աշխ

տողների, քաղաքային և շրջանային կուակոմխոտների, քաղխորհրդների և ռաշխորդկոմների հատուկ ուշադրությունն է հրավիրում սպառողների կուլտուրական սպասարկումը՝ վճռականորեն բարելավելու անհրաժեշտության վրա: Թիֆլիսում և Բաքում բացված լավագույն որինակելի խանութների որինակով պետք է ամբողջ առևտրական ցանցում ապահովել իսկական մաքրություն և կարգ, գընդների հետ քաղաքավարի վերաբերմունք, ապրանքների բաց թողնելու տեխնիկայի պարզացում, բաց թողնվող սպառանքների փաթաթելը, տվյալ խանությում վաճառվող սպառանքների նմուշները ցույց տալու համար վիտրիններ կազմակերպել, ամբողջ առևտրական ցանցն ապահովել անհրաժեշտ ինվենտարով (կշեռք, դանակ և աշխ), պատասխանատվության կանչելով աշխ խանութների վարիչներին և կրպակների և լարյոկների վարիչներին, վորոնք չեն ապահովում կարգի, մաքրության և կուլտուրական խորհրդային առևտրի տարրական կանոններն իր խանութում, կըրպակում, լարյոկում:

